

# Տարսնի իշխանը Ապրդարիպ Հասան Արծրունի

(1071 - 1080 թթ.)

ԵՐՈՒԱՆԻ Հ. ՔԱՍՈՒՆԻ

1021 թ.ին, Սենեքերիմ Արծրունիի (1003-1021 թթ.) Սերաստրա գաղթէն (1) ետք, Վասպուրական աշխարհը բոլորովին անտէր չէր մնացած: Տակաւին հոն կային իշխաններ, որոնք պատրաստ էին հայրենի սահմանները պաշտպանելու համար իրենց սեփական ուժերով պատերազմի դաշտ իջնելու: Անոնցմէ մէկն էր Թոռնաւան դաւառի Խուլ Խաչիկ իշխանը, որուն երկու մանչ զաւակները՝ Հասանն ու Ճնճղուկը, արեւմուտքի մէջ, Միքայէլ Դ. (1034-1041 թթ.) կայսեր ծառայութեան մէջ էին, իսկ երրորդը՝ Իշխանը, տասնհինգ տարեկան պատանի մը, կը մնար հօրը մօտ: 1041 թ.ին, Հեր եւ Ջարեւանդ զաւառներու էմիրները, հաւանաբար Վասպուրական աշխարհի անտէր մնացած ըլլալուն վստահած, կ'անցնին ասպատակումի եւ աւարարութեան: Խաչիկ, երբ կ'իմանայ թէ էմիրները մտած են իր դաւառը, հակառակ իր առաջացած տարիքին եւ

1) Տե՛ս Թովմայի վրդ.ի Արծրունայ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 307-308: Սամուէլի Քահանայի Անեցոյ Հաւաքումն ի Գրոց Պատմադրաց, Վաղարշապատ 1893, էջ 104-105: Վարդանայ վրդ.ի Հաւաքումն Պատմութեան, Վեմետիկ 1862, էջ 92: Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ, Երեւան 1963, էջ 34: Մատթէոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1898, էջ 49: Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վեմետիկ 1956, էջ 24:

«զգործն պատերազմին» թողուցած ըլլալուն, եօթանասուն մարդոցմով կ'ելլէ թշնամին կասեցնելու: Անհաւասար այս ճակատամարտէն խնայելու համար իր պատանի զաւակը, զայն արգելափակել կու տայ: Խաչիկ կը նետուի պատերազմի: Քիչ ետք կը տեսնէ սակայն, որ Իշխան յաջողած է փախչիլ, եւ մտած է կուռի մէջ: Թշնամիներ իմանալով Իշխանի ու ըլլալը, կը ձերբակալեն զայն ու կը սպաննեն: Խաչիկ երբ կը տեսնէ իր զաւկին մահը, «բեկաւ ողն նորա, եւ անկաւ սուսերն ի ձեռաց նորա»: Թշնամի զօրքերը քաջալիբրուած Խաչիկի ուժաթափ վիճակէն, կը յաջողին զայն եւս ձերբակալել ու սպաննել (2):

Շուտով սակայն արեւմուտքէն երկիր կը վերադառնան Հասանն ու Ճնճղուկը: Անոնք կը յաջողին 1000 դահեկանով կաշառել քուրդ ցեղապետ մը, որ երթայ Հեր եւ Զարեանդ դաւառները, ու համոզէ տեղի էմիրները որ ասպատակեն Թոռնաւանը, քանի որ երկիրը անմարդ է ու անտիրական: Քուրդ ցեղապետը կը դործադրէ խորհուրդը: Երբ թշնամի զօրքերը ասպատակելու ախորժակով անդամ մը եւս կը մտնեն Թոռնաւան, Հասան զիրենք կը սպասէր իր 5000 զինուորներով: Հարցումին, թէ որո՞նք սպաննեցին Խաչիկն ու Իշխանը, հրապարակ կու գան երկու մարդէք, առարկայական փաստերովը իրենց ոճիրին: Հասան կը սպաննէ իր հօր դահիճը, իսկ Ճնճղուկ՝ իր եղբոր: Ապա անոնք 4000 մարդ կը կոտորեն թըշնամի բանակէն, ու կը դառնան «խաղաղութեամբ եւ մեծաւ ուրախութեամբ» ու կը փոխեն իրենց սեւ զգեստները (3):

Վասպուրական աշխարհը երկար պիտի չլայելէր սակայն իր խաղաղութիւնը: Վրայ կը հասնին սելճուքեան արշաւանքները, ու անդամ մը եւս երկիրը կը մատնուի աւերածութեան:

1064 թ.ին, երբ Ալի Արսլան կը դրաւէր Անին, սելճուք թըրքական ուրիշ բանակ մը, «արիւնարբու եւ շողղակեր» Սրահանգի առաջնորդութեամբ կը մտնէ Վասպուրական: Սրահանգ կը պաշարէ Վանը, «և զնա տառապեցոյց ի տառապանս խիստ . . . . և զքնակութիւնսն այրեաց հրով»: Նոյն ճակատագրին կ'ենթարկուի նաեւ Արճէշը: Թշնամին կը տարածուի Վասպուրական աշխարհով մէկ: Ամատաշելի կը մնան միայն Ամիւկ ամրոցն ու Աղթամար կղզին: Ամիւկի մէջ կը հաստատուի նահատակ Թոռնիկ Արծրունիի տղան՝ Աբըլմսեհը, «զայր ոմն տոհմակից արքային Սենեքերիմայ»(4):

2) Ուռնայեցի, էջ 90-91: Սմբատ Սպարապետ, էջ 38:

3) Ուռնայեցի, էջ 91-92: Սմբատ Սպարապետ, էջ 38-39:

4) Թովմա Արծրունի, էջ 308-309:

Այս օրերուն է որ կրկին ծայր կու տայ դադթականութեան հոսանքը: Այս անգամ, թուլ թաշիկի թոռնիկը, Հասանի որդին Ապլղարիպն է որ կը լքէ հայրենիքը, մտնելու համար կայսեր ծառայութեան մէջ: Աւելի ուշ, կայսրը անոր կը յանձնէ Կիլիկիոյ Տարսոն եւ Մամեստիա քաղաքները:

«Ընդ նուազել թագաւորութեան եւ իշխանութեան Հայոց, յորժամ յաիշտակեցաւ յիսմայելացւոցն մայրաքաղաքն Անի եւ տարազրեցան թագաւորքն մեր ի դաւառս եւ յիշխանութիւնս արքայիցն Յունաց, այր ոմն յիշխանացն Հայոց՝ Ապլղարիպ անուն, որ էր ի տանէն Վասպուրականի, իրբեւ զմտերիմ եւ զխոհեմ եւ զարի ի դործ պատերազմի, առաքեցաւ յինքնակալէն Ալեքսէ ի դաւառս Կիլիկիեցւոց՝ իշխել մայրաքաղաքին Տարսոնի եւ Մամեստիոյ» (5):

Գատած իր բովանդակութենէն, Գարեգին կաթողիկոս վերոյիշեալ յիշատակարանը դասաւորած է 1190 թ.ի տակ: Կրկին դատած «Ըստ բովանդակութեան», նոյն ժամանակէն հասած ուրիշ յիշատակարան մը յսուելէ ետք Բագրատունի թագաւորութեան «նուազումին» մասին, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի ցիր ու ցան ըլլալուն ու հայրապետներու «տեղիս տեղիս» շրջելուն, կ'աւելցնէ.

«Ի սոյն ժամանակի այր ոմն բարեպաշտան եւ երկրադած յԱստուծոյ՝ ի նախարարաց թագաւորին Հայոց Գագրկայ, որոյ անուն Ապլղարիպ յորջորջիւր, եկեալ առ արքայն Յունաց Միքայիլ, մտեալ ի ծառայութիւն ինքնակալին, որոյ պարգեւեալ զիշխանութիւն աշխարհիս Կիլիկիեցւոց, ընձեռէ նմա թագաւորն զՏարսոն քաղաքն հանդերձ ընդ ձեռամբ անկեալ դղեկաւք» (6):

Ապլղարիպ Հասան Արծրունիի Վասպուրականէն դադթելու թուականին շուրջ շփոթ մը կը տիրէ հայ պատմագրութեան մէջ: Ըստ ոմանց, ան հայրենի երկրէն դուրս եկած է «Սենեքերիմի հետ» (7), ուրեմն 1021 թ.ին: Ակիւնեան, գլխաւորաբար թելադրուած վերոյիշեալ յիշատակարաններու վկայութենէն, Ապլղարի-

5) Գաբրիէլ Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք Ձեռագրաց, Ա. հտք., Ամբիլիաս 1951, էջ 541:

6) Նայնը, էջ 551-552:

7) Հ. Ամառեան, Հայոց Անձնանունների Բառարան, Ա. հտք., Երևան 1942, էջ 22: Վ. Ս. Վարդանեան, Վասպուրականի Արծրունեաց Թագաւորութիւնը, Երևան 1969, էջ 235:

պի դաղթը կը դնէ 1064 թ.էն անմիջապէս ետք (8) : 1021 թ.ը մերժելի կը մնայ նաեւ անոր համար որ եթէ այդ թուականին Ապլղարիպ արդէն հասակ առած մարդ էր, 1041 թ.ին, իր մեծ հօր Սուլ Սաչիկի, Հեր եւ Զարեանդը դաւաճներու էմիրներուն դէմ մղած կռիւի ատեն, զինք անպայման պիտի դռնէինք պատերազմի դաշտին վրայ, եւ կամ եթէ երկրէն դուրս էր, պատմագիրը պիտի յիշէր եւ այդ, ինչպէս էր պարագան իր հօր եւ հօրեղբոր՝ Հասանի եւ Ճնճղուկի :

Յիշատակարաններէն առաջինին, Ապլղարիպի դաղթը Ալեքս (1081–1118 թթ.) կայսեր ժամանակ դնելը կարելի կ'ըլլայ հեշտութեամբ մերժել այն իսկ պատճառով որ 1079 թ.ին, մենք Ապլղարիպը արդէն հաստատուած կը դնենք Տարսոնի, Մամեստիոյ, Լամբրոնի եւ Պապիռոնի մէջ (9) :

Ապլղարիպի Միքայէլ է Դուկաս (1071–1078 թթ.) կայսեր մօտ անցնիլը տեղի ունեցած պէտք է ըլլայ 1071 թ.ին, Մանագլեբրտի մէջ Ռոմանոս Դ. Դիոգինէս (1068–1071 թթ.) կայսեր կրած ճակատագրական պարտութենէն անմիջապէս ետք : Ապլղարիպ, որ 1064–1071 թթ.ուն հաւանաբար մնացած էր Գազիկ Բ.ի մօտ, ինչ որ կը թելադրէ մեզի վերոյիշեալ երկրորդ յիշատակարանի «ի նախարարաց թաղաւորին Հայոց Գազկայ» խօսքը, աճապարած էր Բիւզանդիոնի նոր կայսեր մօտ, թերեւս Գազիկ Բ.ի իսկ թելադրանքով, հայոց թաղաւորին եւ իր հաւատարմութիւնը յայտնելու անոր, միաժամանակ ճշդորոշելով իրենց դիրքը Ռոմանոսի ու Միքայէլի միջեւ ստեղծուած պայքարին մէջ (10) : Միքայէլ սիրով կ'ընդունի Ապլղարիպը, որուն կը յանձնէ Տարսոնի ու Մամեստիոյ իշխանութիւնը :

8) Հ. Ն. Ալիմեան, *Ներսէս Լամբրոնացի*, Վիեննա 1956, էջ 408 :

9) Ուռնայեցի, էջ 219 : Սմբատ Սպարապետ, էջ 86 : Վարդան Վրդ., էջ 105–106 :

10) Մանագլեբրտի մէջ պարտուելէ ետք, Ռոմանոս դաշինք մը կը կնքէ Ալփ Աբուլամի հետ, ու կը փութայ Կ. Պոլիս : Սակայն ճանապարհին արդէն կ'իմանայ իր գահընկէց հռչակուելուն լուրը, ու նոր կայսեր՝ Միքայէլ Բ.ի իշխանութեան բարձրացած ըլլալը : Ռոմանոս կը փորձէ գեմֆի ուժով վերագրաւել գահը, սակայն կիլիկիոյ մէջ կը պարտուի, ու կը տարուի Կ. Պոլիս, ուր մտնելու համար կ'ուսմանայ եղբրակամ վախճան մը (մանրամասնութեանց համար տե՛ս Michael Psellus, *Fourteen Byzantine Rulers*. Translated by E. R. A. Sewter, Suffolk 1966, pp. 360–366, նրումք Հ. Քառունի, ԺԱ. Դարու Անտիոքի Հայ Կառավարչներ Պետրոս Սաչաւորի եւ Վասակ Պաշլուանի, «Հայկագեան Հայագիտական Հանդէս», Պէյրուք 1971, էջ 128–129) :

Հոս, անհրաժեշտաբար նկատի պէտք է առնել մէկ քանի պարագայ: Միքայէլ, Ապլղարիպի յանձնելով Կիլիկիոյ մէկ կարեւոր շրջանին իշխանութիւնը, բացառիկ վստահութիւն մը կը ցուցաբերէր անոր հանդէպ, ինչպէս նաեւ սելճուքեան յարաճուն ծաւալումին դէմ նոր պատուար մը կը ստեղծէր կեդրոնական Փոքր Ասիոյ հարաւային դօտիւն մէջ, Տարսոն հայահոծ կեդրոնով: Միաժամանակ, հաւատարիմ բիւզանդական «բաժնէ որ տիրես» քաղաքականութեան, Միքայէլ կը հեռացնէր Ապլղարիպը Գազիկ Բ.էն, որուն, Պիղուի մէջ վարած հակաբիւզանդական ընթացքը անծանօթ չէր Կ. Պոլսոյ արքունիքին:

Կիլիկիոյ մէջ, Ապլղարիպի իշխանութիւնը կը տարածուէր ընդարձակ հողերու վրայ: Տարսոնէն ու Մամեստիայէն անկախ, ան նաեւ իր տիրապետութիւնը կը նետէ «երկու անմատոյց» դղեակներու՝ Լամբրոնի ու Պապիւռոնի վրայ, որոնցմէ առաջինը, աւելի ուշ կը յանձնէ Արցախի Օշին իշխանին (11):

Ապլղարիպ, իր նոր իշխանութեան սահմաններուն մէջ կը նուիրուի շինարարական աշխատանքներու: Ան «բազում վանորայս» կառուցանել կու տայ «յաշխարհիս յայսմիկ», իսկ Պապիւռոնի մէջ «մեծ եկեղեցի» մը շինել կու տայ, ինչպէս նաեւ իր եւ իւրայիններուն դամբարանը (12):

1072 թ.ին, Ապլղարիպ Արծրունիի մօտ կ'ապաստանի Գէորգ Լոռեցի աթոռակից կաթողիկոսը, որ այդ պաշտօնին տիրացած էր 1067 թ.ին, Մամիզաւի մէջ, ուր կ'իշխէր Կարսի Գազիկ Աբասեանը, երբ Գրիգոր Բ. Վկայասէր (1065-1105 թթ.) կաթողիկոսը երկար շրջապտոյտի մը կը ձեռնարկէր, այցելելու համար Եգիպտոս, Երուսաղէմ, Ասորիք եւ Կոմաղեն: Վկայասէրի ճամբորդութենէն վերադարձին, «եղեւ հակառակութիւն ի մէջ Տէր Գրիգորիսի եւ Տէր Գէորգեայ»: Վկայասէր պաշտօնանկ կը հռչակէ Գէորգը, «եւ առեալ դքօզն դլսոյ նորայ»: Գազիկ Աբասեանի եւ այլ իշխաններու հովանաւորութենէն զրկուած, Լոռեցի, առանձին մնալով Վկայասէրի դէմ, ստիպուած կ'ըլլայ հեռանալու Տարսոն, Ապլղարիպի մօտ, ուր ան կը շարունակէ «կաթողիկոսական ճոխութիւն եւ շրջակայից վրայ իրաւասութիւն գործածել» (13):

11) Գաբեգիմ Կաթողիկոս, Յիշատակարանք Զեռազրաց, Ա. հտր., էջ 541, 552: Վարդամ Վրդ., էջ 106:

12) Գաբեգիմ Կթղկոս, Յիշատակարանք Զեռազրաց, Ա. հտր., էջ 552. 541-542:

13) Ուտիայեցի էջ 205-206: Օրմանեան, Ազգապատում, Ա. հտր., Կ. Պոլիս 1912, էջ 1278-1280, 1286-1287:

Օրմանեան կը յիշեցնէ թէ Լոռեցի կը յաջողի Տարսոնի մէջ հաստատուել, «օգտուելով իշխանութեանց տարբերութենէն եւ ազգային անիշխանութենէն» (14): Հարեւանցի կերպով եղած այս մատնանշումը հարկ է ուշադրութեամբ նկատի առնել, քանի որ Ապրիլարիպի վերապահած ընդունելութիւնը Լոռեցիի, իր ետին ունէր քաղաքական հաշիւներ: Անկախ այն իրողութենէն, որ դէպքը կը բացատրէ Տարսոնի իշխանին վայելած հեղինակութիւնը, Ապրիլարիպ, իր այս արարքով կ'անջատուէր հայ քաղաքական դէմքերու այն խմբակէն, որոնք միասնականութիւն մը կը պահէին օրինաւոր կաթողիկոսին, Վկայասէրի հոգեւոր իշխանութեան տակ: Բայց Ապրիլարիպի անջատողական այս քաղաքականութիւնը առաւել հաս կը բնորոշուի, անոր՝ Գազիկ Բ. Բագրատունիի հետ ունեցած խնամիրական յարաբերութեանց մէջ:

1079 թ.ին, Գազիկ Բ. Բագրատունի բանակով մը կ'երթայ Տարսոն, Հասանի որդի Ապրիլարիպ իշխանին մօտ, խնամախօսութեան համար: Գազիկ սիրով ընդառաջած էր Ապրիլարիպի հրաւերին: Սակայն, ինչ ինչ պատճառներով երբ խնամախօսութիւնը կը ձախողի, Գազիկ, վերադարձին, «որպէս առիւծ մունչելով», շղթայի կը զարնէ գաւառի բոլոր իշխանները, ու կու գայ Առժախասս դաշտի Կիլիստրա ամրոցը, որ կը պատկանէր Մանտալէ երեք յոյն Լորայրներուն:

«Յայսմ ժամանակիս Գազիկ արքայ Հայոց վառեալ զգունդ զօրաց իւրոց եւ դնաց էջ ի Տարսոն քաղաքն առ Ապրիլարիպն իշխանն Հայոց՝ որդւոյ Հասանայ՝ որդւոյ Խաչկայ Խլին՝ առն քաջի ի Վասպուրական գաւառէ: Սա գնացեալ առ Ապրիլարիպն սիրոյ աղաղաւ, որ վասն խնամութեան կոչեալ էր զԳազիկ՝ Ապրիլարիպայ, եւ յաղաղս պատճառի ինչ որ եղեւ զործ խնամութեան, եւ դարձաւ Գազիկ որպէս զառիւծ մունչելով, վասն զի էր մեծ եւ հզօր եւ այր քաջ, եւ կալեալ դամենայն իշխանս գաւառին՝ վարէր զնոսա երկաթի կապանօք առաջի իւր, եւ եկեալ հաղար արամբ ի դաշտն Առժախասայ ի բերդն՝ որ ասի Կիլիստրոյ, եւ էին բերդատէրքն երեք եղբարք իշխանք Հոռոմոց՝ որդիք Մանտալէի.....» (15):

Ակինեան կ'ընդունի որ «Ապրիլարիպ ունէր դուստր մը միայն, զոր կը փափաքէր հարսնացնել Գազիկ Բ.ի Դաւիթ որդւոյն (1078/9) որ չյաջողեցաւ» (16):

14) Օրմանեան, Ազգապատում, Ա. հտր., էջ 1287:

15) Ուսեայեցի, էջ 219: Նաեւ տե՛ս Սմբատ Սպարապետ, էջ 86:

16) Հ. Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 418:

Սակայն Գաղիկի Տարսոն երթ ու դարձի առնչութեամբ կ'արժէ նկատի առնել մէկ քանի պարագաներ: Ինչո՞ւ համար ան հազար հոգիներ քանակ մը պիտի առնէր իրեն հետ խնամախօսութեան մը երթալու համար: Արդեօ՞ք այն էր պատճառը որ Գաղիկ, իր հողերէն դուրս, ապահով չէր զգար ինքզինք, վախճալով բիւզանդական դաւադրութենէ մը: Սակայն եթէ այդ էր իրողութիւնը, ձախող խնամախօսութենէն ետք Գաղիկ ինչո՞ւ համար շրջանի բոլոր իշխանները, որոնք անշուշտ Ապլղարիպի հովանաւորութիւնը կը վայելէին, պիտի զարնէր շրթայի: Ձախողած խնամախօսութեան մը համար անբնական չէ՞ր Գաղիկի ընթացքը:

Ուռհայեցի, եւ իրեն հետեւելով Սմբատ Սպարապետ, ճշմարտութեան մէկ երեսն է որ կու տան վերոյիշեալ պատումով: Ամբողջ ճշմարտութեան համար հարկ կ'ըլլայ դիմել Վարդան Վարդապետի: Ահա թէ ինչ կը պատմէ ան.

«Իսկ գտէրն Անւոց զԳաղիկ՝ ..... զորդիւն իւր կըտսեր տայ 'ի փեսայութիւն Ապլղարբի որդւոյ Սաչկայ, յիշխանացն Վասպուրականի, որ ընդ ձեռամբ ունէր զՄսիս եւ զԱտանա, զՊապառօնն եւ զԼամբրօնն, զոր ատեաց եւ ետ 'ի բանդի, եւ լուեալ հօրն՝ դնաց հանել զնա, եւ 'ի դառնայն յիջալանս, խեղդեցին զնա Հոռոմք: Եւ պիղծն Ապլղարիպ սպան դեղով զփեսայն» (17):

Նախ կ'արժէ նշում մը կատարել հոս: Եթէ Վարդան Վարդապետ սխալմունքով մը չէ որ Ատանան յիշած է Տարսոնի փոխարէն, ապա ուրեմն պէտք է ընդունիլ թէ Ապլղարիպ իր իշխանութիւնը նետած էր նաեւ Ատանայի վրայ, ինչ որ անհաւանական ըլլալ չի թուիր, նկատի առած Ատանայի աշխարհադրական դիրքը, Տարսոնի ու Մսիսի միջեւ: Ապա, պէտք է հարց տալ թէ ինչպէ՞ս պէտք է հասկընալ «դնաց հանել զնա» խօսքը: Արդեօ՞ք Գաղիկ կը յաջողի բանւէն ազատել իր տղան, զոր Ապլղարիպ կը թունաւորէ անոր հօր Տարսոնէն հեռանալէն ու եղբրական մահէն ետք: Բայց այդ պարագային ինչպէ՞ս բացատրել Ուռհայեցիի ու Սմբատ Սպարապետի աւանդածը, թէ Գաղիկ «որպէս առիւծ մունչեալ», կը դերէ շրջանի բոլոր իշխանները, ու ճամբայ կ'իյնայ: Իր նպատակին հասած հայրը պէտք ունէ՞ր վրէժխնդրական նման արարքի մը:

Դէպքերու տրամաբանական ընթացքը պէտք է նկատել հետեւեալը: Ապլղարիպ, որ մանչ զաւակ չունէր, իրեն որպէս ժառանգորդ պիտի ունենար իր փեսան, Դաւիթը, որ անշուշտ իր հօր՝

Գազիկ Բ.ի քաղաքական ուղղութեան հետեւող մարդ մըն էր: Ապլլաղարիպ, Բիւզանդիոնի հաւատարիմ վասալը, չէր կրնար հանդուրժել Դաւիթի քաղաքական մտածողութիւնը, որ տարբեր էր իրենիցէն, ու կը ձգտէր Բիւզանդիոնէն անկախ իշխանութիւն մը վարելու: Ապլլաղարիպի ու Դաւիթի վէճը կը հասնի հոն, որ Տարսոնի իշխանը կը դիմէ բռնութեան, ու բանտարկել կու տայ իր փեսան: Գազիկ, բանակով մը կը դիմէ իր տղուն օգնութեան, սակայն մինչեւ իր հասնիլը, Ապլլաղարիպ արդէն թունաւորելով սպաննած էր զայն: Գազիկ, զայրացած, «որպէս առիւծ մոնչելով», կը գերէ ըջանի բոլոր իշխանները, ու կը բռնէ վերադարձի ճամբան:

Սակայն շուտով վրայ կը հասնի Գազիկի եղբրական վախճանը: Կիզիստրա ամրոցին տէրերը, Մանտալէ եղբայրները, դաւադրութեամբ կը ձերբակալեն իր բանակէն անջատուած, ու երեք ընկերակիցներով յառաջացող Բագրատունի վերջին թագաւորը, ու իրենց հետ կը տանին բերդ: Գազիկի ձերբակալութեան լուրը իմանալով, Գազիկ Աբասեան, Սենեքերիմ Արծրունիի տղաքը՝ Ատոմ եւ Ապուսահլ, «և ամենայն իշխանքն Հայոց» կը քալեն բերդին վրայ: Սակայն, պատերազմական դործողութիւնները կը մնան ապարդիւն: Մինչեւ իսկ Փիլարտոս Հայր պատուիրակութիւն մը կը զրկէ Մանտալէ եղբայրներուն մօտ, պահանջելով Գազիկի ազատ արձակումը, այլապէս, կը սպառնայ զանոնք կորստեան մատնել: Սակայն այս սպառնալիքն ալ կը մնայ անզօր: Մանտալէ եղբայրները աղեղի լարով մը կը խեղդեն Գազիկը, ու զայն կը կախեն պարիսպէն վար:

«Եւ յաւուրն ութերորդի (Գազիկի ձերբակալութեան, Ե. Հ. Ք.) ժողովեցան ի վերայ բերդին ամենայն տունն Հայոց, Գազիկ Աբասայ որդին եւ ամենայն ցեղն Սենեքերիմայ՝ Ատոմ եւ Ապուսահլ եւ այլ ամենայն իշխանքն Հայոց եւ զաւուրս ինչ պատերազմեալ ի վերայ բերդին ոչինչ կարացին առնել, վասն զի ամուր էր յոյժ, եւ որք բռնեալ էին զԳազիկ՝ ոչ համարձակէին թողուլ ի յահէ Գազիկայ, եւ յայնժամ յլարկեալ առ նոսա անօրէն Փիլարտոսն եւ ասէր, եթէ «Զիարդ համարձակեցայք զայդ գործել ընդ առն թագաւորի. եթէ թողոյք՝ եւ եթէ ոչ, ձեզ կորուստ գործեցիք զայդ»: Եւ յայնժամ աստուածասպան ազուն Հոռոմոց լարով աղեղան խեղդեցին զթագաւորն Հայոց եւ կախեցին զնա ընդ պարիսպուն զօր մի» (18):

18) Մատթեոս Ուռայեցի, էջ 219-220: Նաեւ տե՛ս Մմբատ Սպարապետ, էջ 86-87, Սամուէլ Անեցի, էջ 116, Վարդամ Վրդ., էջ 106:

Վերոյիշեալ անցուղարձերուն մէջ մեր ուշադրութիւնը կը դրաւէ պարագայ մը: Գաղիկի օգնութեան փութացող հայ իշխաններուն մէջ չի յիշուիր Ապլղարիպի անունը: Չենք կրնար ընդունիլ որ զայն պէտք է փնտռենք «եւ այլ ամենայն իշխանքն Հայոց» խօսքին մէջ: Երբ Ուռհայեցի, եւ անոր հետեւելով Սմբատ Սպարապետ իրենց անուններով կը յիշատակեն Գաղիկ Աբասեանը, Ատոմ եւ Ապուսահլ Արծրունիները, Փիլարտոսի զրկած պատուիրակութիւնը, անկարելի է որ մոռացութեան տուած ըլլային Ապլղարիպի մը հեղինակութիւնը վայելող իշխանի մը անունը: Եւ իր բացակայութիւնը Գաղիկի օգնութեան աճապարող հայ իշխաններու շարքին մէջ, առաւել եւս կը բացայայտէ անոր ունեցած հակառակութիւնը Բաղրատունի վերջին թաղաւորին դէմ, ու մինչեւ իսկ իրաւունք կու տայ մեզի ըսելու որ Ապլղարիպ անմասն չէր Գաղիկի դէմ կազմակերպուած դաւէն: Իր այդ ընթացքով, Տարսոնի տէրը առաւել եւս կը շեշտէր իր վասալական հաւատարմութիւնը Բիւզանդիոնի հանդէպ, եւ ընդդիմութիւնը Հայաստանէն դուրս երող հայ թաղաւորներու եւ իշխաններու մղած ազատագրական պայքարին:

Բիւզանդիոնի հակահայ քաղաքականութեան պատճառով, եւ սելճուքեան արշաւանքներուն առջեւէն Հայաստանէն հեռացող հայ իշխաններէն մէկը կ'ըլլայ նաեւ Օշին Գանձակեցի (19), որուն նկատմամբ առանձին վերաբերմունք ցոյց կու տայ Ապլղարիպ Արծրունի: Տարսոնի տէրը, իր «սիրեցեալ եւ մտերիմ», ինչպէս եւ «հաւատարիմ» Օշինին կը յանձնէ Լամբրոնի բերդը (20), ուր, այս վերջինը հիմը կը դնէ Հեթումեան Տան:

Ապլղարիպ, Օշինի մէջ դատած էր իր քաղաքականութեան հաւատարիմ ու վստահելի զինակիցը:

Ապլղարիպ Հասան Արծրունի կը մեռնի 1080 թ.ի շուրջ (21): Իրեն կը յաջորդէ իր աւագներէն մէկը, Սահակ (թէ՞ Մոնաստրաս), որ փեսայացած էր Լամբրոնի Օշին իշխանին (22):

19) Սամուէլ Անեցի, էջ 117:

20) Գաբեգիմ կթղկս., Յիշատակարանք Ձեռագրաց, Ա. հտք., էջ 542, 552:

21) Հ. Ն. Ակիմեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 418:

22) Գաբեգիմ կթղկս., Յիշատակարանք Ձեռագրաց, Ա. հտք., էջ 542: Մ. Զամչեանց, Հայոց Պատմութիւն, Բ. հտք., Վեմեսիկ 1785, էջ 1005: Ալիշան,

**ABELGARIB HASSAN ARDZROUNI,  
THE PRINCE OF TARSUS**

(1071-1080)

YERVANT H. KASSOUNY

In the year 1021 A.D., following the example of Senecherim Ardzrouni of Vaspuragan (1003-1021), a number of the nobility immigrate to Sebastia. Among them is Hassan's son, Abengarib Ardzrouni, who leaves his country and chooses to establish himself near Gagik II, the last of the Bagradouni kings. After the defeat, in 1071, of Romanus IV (1068-1071), in Manzikert, Abengarib Ardzrouni, following the advice of Gagik II, hastens to Constantinople to pay homage to the new Emperor Michael VII Ducas (1071-1078). The Emperor, finding in him a trustworthy vassal, entrusts Abengarib with the rule, in Cilicia, of Tarsus and Mamesdia. In the year 1079, a matrimonial issue provides sufficient cause for animosity between Abengarib and Gagik II. Abengarib kills his son-in-law, Gagik's son David, and later, ever faithful to Byzantium, furtively takes part in the assassination of Gagik II, executed by the Greek Mandale brothers.

---

*Միտուան*, վեմերսիկ 1885, էջ 71: Հ. Անտոնյան, *Հայոց Անճնանունների Բառարան*, Դ. հոսք., Երևան 1948, էջ 363: Count W. H. Rüdert-Collenberg, *The Rupenides, Hethumides and Lusignans*, Paris 1963, Table II H. 1. Սկզբնաղբիւրը չի յիշեր «Սահակ» անունը: Ակիմեան կը մերժէ Ապլարիպի յաջորդին տրուած «Սահակ» անունը, գրելով՝ «Հ. Մ. Զամչեան, որ անխոհեմութիւնն ունեցած է պատմական անմտունքով հիմնաստեղծ անուններ բաշխել, այս անգամ այդ անմտունքը յորջորջած է «Սահակ» (Հ. Ն. Ակիմեան, *Ներքին Լամբրոնացի*, էջ 413): Ակիմեան Մոմաստրաս անունով կը ճանչնայ Ապլարիպի յաջորդը (Նոյնը, էջ 413, 415):